Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի *առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)*

Ընդհանուր բաժնի առաջատար մասնագետը աշխատակազմի աշխատանքների կազմակերպման, համակարգման,ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի, կատարում է բաժնի պետի հանձնարարականները, մասնակցում է համայնքային հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման, ինքնակամ հողազավթման կանխման,կասեցման և հետևանքների վերացման աշխատանքներին, մասնակցում է հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին, ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր:Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում աշխատանքային ծրագրեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ, մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը, քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկմանը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ Հողային օրենսգրքի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

1. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի *առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-7)*

Ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետը աշխատակազմի աշխատանքների կազմակերպման, համակարգման,ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի, կատարում է բաժնի պետի հանձնարարականները, մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, ,իր իրավասության սահմաններում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին, իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին, իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքներին, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ, ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.ունի նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.ունի

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014 թվականի դեկտեմբերի 16-ին ժամը ժամը 12^{00}-ին Փարաքարի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

՝-դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

՝-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի (բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

՝-արական սեռի անձիք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

՝-մեկ լուսանկար 3x4 չափսի

՝-անձնագրի պատճենը

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից:Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 1 դեկտեմբերի 2014 թվական:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմ, /Նաիրի 42 հասցեով , հեռ. 0231 6-00-42) կամ Արմավիրի մարզպետարան՝ ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն -/ ք. Արմավիրի, Աբովյան 71, հեռ 0237 2-07-70, 0237 2-76-49/